

# ԵԿԵՂԵՑԻ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ

ՀԱՅՈՅ ԵԿԵՂԵՑԻՆ 1906 թուին

Ռուսահայոց բաժնի եկեղեցու համար 1906 թուականը բազմաւոր նորութեամբ սկսուեցաւ. ոչ միայն նախընթաց տարուայ օգոստոսին կայսերական հրովարտակը վերադարձնում էր Հ. եկեղեցուց աւնուած ուսումնարաններն ու կալուածները, այլ և Կովկասի բարեացակամ Տ. փոխարքան՝ Վարանցով-Գաշկով՝ հրատարակել էր իւր ժամանակաւոր կանոնները Հ. եկեղեցիների գոյքերի կառավարութեան մասին: Եկեղեցիների գոյքերի կառավարութեան գործը յանձնուում էր ձխական հոգաբարձութիւններին, որոնք պէտք է ընտրուէին համայնքի կողմից և երեցփոխի հետ կառավարէին եկեղեցու կալուածներն ու եկամուտները, այլ և հոգ տանէին հիմնել դպրոցներ, հիւանդանոցներ, ապաստարաններ և ուրիշ բարեգործական հաստատութիւններ: Ժամանակաւոր կանոնները թոյլ էին տալիս մինչև իսկ ազատ տուրք նշանակել ձխականների վերայ միանուագ կամ մշտական, եթէ եկեղեցու սովորական եկամուտները բաւական չլինին վերոյիշեալ բարենպասակ հաստատութիւնների պահպանութեան համար: Պէտք է մանէր կանոնաւոր հաշուետուութիւն ձխական ֆոնդներում և ապա առաջնորդի առաջ: Ուրախութեան զգացումով միայն կարող էր լցուել Ազգային եկեղեցու վերակենդանութեան և պայծառութեան բարեկամներին սրտերը. հնարաւորութիւն էր շնորհուած վերջապէս ձխական համայնքը կազմակերպել քրիստոնէութեան նախկին դարերի հետեւողութեամբ և եկեղեցին կարող էր առանց դժուարութեան ձգտել իւր կրթական, բարեգործական և քաղաքակրթական առաքելութեան: Անհնարին չէր թուում նոյն իսկ բարեփոխել տալ պոլոֆենիան և Հ. եկեղեցին վերածել իւր նախկին կանոնական, ինքնիշխան կառավարութեան:

Բայց տարաբաղաբար ժամանակն ուրիշ էր. մենք հարկաւոր խոհեմութիւնն ու եկեղեցասիրութիւնը չունեցանք օգտուելու այդ յարմարութիւնից, և ոչ միայն անպատու անցաւ այս մի տարին ստեղծագործող բարեկարգութեան և արդիւնաւորութեան անսակէտից, այլ մտքերի այնպիսի շիտթութիւններ յառաջ եկան, որ երկար տարիներ պէտք է աշխատել կարգ և



կանոնաւորութիւն ստեղծելու համար եկեղեցական ներքին կառավարութեան մէջ: Միակ աչքի ընկնող կրկնված փակուած դպրոցների բացումն էր, բայց այն էլ ոչ անկարօտ բարեկարգութեան: Այն շարժումը, որ բռնել էր ամբողջ Ռուսաստանը, հասել էր և հայ հասարակութեան: Այդ ընկան էր. հայ ժողովուրդն ևս իւր պահանջներն ու կարիքներն ունէր պետական վերակազմութեան հարցում, ուրեմն և պէտք է իւր ձայնը բարձրացնէր, ցոյց տար այն վերքերը, որ յառաջ էին եկել սխալ հասկացուած կառավարութեան խտուրթիւնների տակ: Բայց քաղաքական տհասութիւնը մեր ազգի յատկութիւններից մէկն է. մենք ոչ միայն չկարողացանք քաղաքական որոշ ծրագիր ստեղծել մեր ձգտումների և ցանկութիւնների համար ընդհանուր շարժումներն անտակետով, այլ ընդհակառակ մեր բոլոր ուղարկներն ուղղեցինք եկեղեցու դէմ, որ դարերի բերմունքով արիւնաքամ լինելուց յետոյ, ընկել է նոր պայմանների մէջ և դեռ չի կարողացել իւր հաստատուն դարգացման և յառաջադիմութեան ուղին դանել: Մտքերի շփոթն ու քասոր, որ յատուկ է յեղափոխական շրջաններին, փոխադրուեցաւ եկեղեցական սահմանների մէջ և կատարուեցան այնպիսի իրողութիւններ, որ մեր կատարեալ տհասութեան կենդանի վիայական կարող է լինել:

Առաջին խրատումն սկսուեցաւ դպրոցական հաստատութիւններից. Պատանի սերունդը իւր տար և դեռ ևս չկազմակերպուած ընտանոցութեամբ, ընական է, որ յեղափոխական շարժման ազդեցութեան տակ հարկաւոր չափաւորութիւնն ու սառնութիւնը չպահէր և անցնէր պարտքի և իրաւանց սահմանից: Պետական դպրոցների հետևողութեամբ, որ քաղաքական նպատակներով դասադուրներ էին սարքում, արուեստական կեցպով շարժումներ սկսուեցան և մեր դպրոցներում: Վերին աստիճանի բնարոշ էր հասարակութեան և մամուլի որոշ մասի բռնած դիրքը. աշակերտական բոլոր յանցանքները պաշտպանութիւն էին վայելում, և միամիտ ու անխորձ պատանիները կարծում էին, թէ մեծ հերոսութիւն են անում, երբեմն մինչև յիմարութեան հասցրած անկարգութիւններով: Անշուշտ կարող էին սխալներ գործել և ուսուցիչներն ու վարչութիւնները, բայց աշակերտների պաշտպանութիւնն այնքան ակներև էր, որ նոյն խել հնարաւորութիւն չէին տալիս ստայօդ և հասարակութեան մոլորեցնող լուրերը հերքել: Միշտ մեղաւոր էին վարչութիւններն ու վարժապետները, արդար և իրաւացի աշակերտութիւնը: Այդք չէր ուղում մտածել, թէ ո՞ր է տանում աշակերտների յաճախ անիրագործելի պահանջներն ու սանձարձա-



կուժիւնները: Գործին մտակ կանգնած և տեղեակ մարդկանց համար պարզ էր, թէ ինչպէս այլասեռում է մասագտերունքը: Պատանեկական սակի հասակում սովորում էին նորա միջոցների մէջ խտրութիւն չգնել, սուսթեան և կեղծիքի ճանապարհն ընտրել: Աւստիցական միտումները խոշոր դեր էին կատարում այս շարժման մէջ: Աւելորդ ենք համարում փաստերը թուել, քանի որ կատարում իրողութիւնների գոնէ մի շնչին մասը արձանագրել է լրագրութիւնը և դեռ թարմ է յիշողութեան մէջ: Տարեբային հոսանքը տանում էր ամենքին. նոյն իսկ գիտակցող և սրտացու մարդիկ չէին համարձակում իրենց քողորն արձակել, և եթէ բազբում էին, մնում էր առանց ու շարժութեան: Աւ որս հեռանքն էր այն խառնակ վիճակը, որի մէջ գտնում էին մեր թեմական դպրոցներն ու ձեմարանը: Շուշուայ, Ն. Նախիջևանի խայտառակ պատմութիւններն ու վերին դասարանների ժամանակաւոր փակումը յայտնի են ամենքին, ներսեան և Երևանի թեմական դպրանոցների, ձեմարանի լրջաւումներն ու անհանգիստ կեանքը, Յովնանեան դպրոցի կուսակցական հողի վերայ եղած պայքարն ու կատարում անարգարութիւնները նոյնպէս: Արգասպահութեան և բարոյական դատարակութեան վերջին նշոյններն անգամ անհետանալու վրայ են մեր դպրոցներից. տարակոյսներով ենք լցուած և այս տարուայ համար:

Այս տարւամ վիճակից հանելու համար էր, որ Ն. Արքութիւնն արձակեց իւր Մարտի կանգակը: Պէտք է ընդոթ թեմերից հաւաքուէին դպրոցների թուի համեմատ մօտ 60 հոգի ուսուցիչներ, մանկավարժներ և հոգարարձուներ, դպրոցական դործին և ցաւերին տեղեակ մարդիկ և ծրագիր ու կառավարութեան միատեսակ կանոններ մշակէին դպրոցական կեանքն ու յառաջագիմութիւնը կարգաւորելու համար: Թեմական դպրոցներն ու ձեմարանը նախօրօք ծրագիրներ պիտի պատրաստէին իրենց ներկայացուցիչներին հետ ուղարկելու. նախանցեալ տարի Տիխիում հաստատուած Յանձնաժողովն ևս պիտի ներկայացնէր իւր մշակած ծրագիրը, որ քննութեան բուն նիւթը պիտի լինէր սասրին դասարանների կամ ծխական դպրոցների համար: Ծրագրուած էր ուրեմն մի լուրջ գործ, բայց նմանողութեան յատկութիւնը որոշ խաւերի մէջ գերադաս հանդիսացաւ զգաստութեան և բանականութեան թելադրութիւններից: Յեղափոխական տարրերի կողմից բոյկոտ էր հրատարակուած Գումայի դէմ, նոյնը պէտք էր անել և մասնագիտական բնաւորութիւն ունեցող մի համադումարի համար: Մեղանում միշտ նկատելի է այս երևոյթը. բաւական է, որոշ խմբի մարդիկ մի բան արին և հրատարակեցին լրագրութեան մէջ, ամեն կողմից կսկսեն



արձագանք տալ առանց քննութեան ենթարկելու խնդիրը, առաց ստուգելու առաջարկութեան օգտաւէտութիւնն ու խելացիութիւնը: Տասնեակ օրինակներով կարելի է հաստատել այս իրողութիւնը: Տիփսիսում որոշ մարդիկ սկսեցին ժողովներ գումարել, բողոքներ արտայայտել և ահա նոյն բողոքները իսկական արձագանքի նման կրկնուեցան և ուրիշ տեղերից: Փիճաղելին այն է, որ բողոքները լինում էին որպէս թէ ուսուցիչներէ կողմից, բայց իսկապէս թերթերի աշխատակիցներ էին և առաւելապէս որոշ կուսակցութեան սպասաւորներ: Նկատելի էր, որ հակաեկեղեցական արամադրութիւն էր ստեղծւում, եկեղեցու պաշտօնէութեան դէմ պայքար: Զէ՛ որ Ռուսաստանում բիւրօկրատիայի դէմ էին մտքառում, պէտք էր նման բան մեր մէջ ևս ստեղծել: Պէտք էր խլել դպրոցները հոգևորականութեան ձեռքից, նոքա խեղդել են հայ ժողովրդին իրանց ձիրաններում, պէտք էր ազատել հայ ժողովրդին ստրկութիւնից: Պատմական հեռու և մօտիկ անցեալ, օրէնք, աւանդութիւն, հոգևոր իշխանութիւն, ամեն ինչ մոռացուած էր: Մտքերի քառսը տաքգլուխների գլխում օղային ամբոցներ էր կառուցանում խորտակած կարգերի փոխարէն: Հայոց եկեղեցին և եկեղեցականութիւնը վնասակար էր հրատարակում հայ ժողովրդի համար: Օ՛ր, թշուառ ազիտութիւն և միակողմանի հասկացողութիւն, ինչե՛ր չէք կարող ստեղծել: Այն եկեղեցին, որ իւր սպասաւորներով 1600 տարուայ ընթացքում ոչ մի ուրիշ շահ չի ունեցել, բայց եթէ իւր ժողովրդի, հօտի շահերը միայն, այն եկեղեցին և սպասաւորութիւնը, որ հայ ժողովրդի քաղաքակրթութեան, հոգևոր կեանքի որորանն է եղել, որ ինքը զրկուել է շքեղութիւնից ու զարդից, որ իւր սպասաւորներին սեղմել է նիւթական խիստ չափաւորութեան սահմաններէ մէջ, որպէս զի իւր եկամուտները իւր օրդոց խեղճութիւնը մեղմացնելու և դատարարակութեան գործի համար գործադրէ, վնասակար էր հրատարակում: Ո՞վ կարող է ասել, որ մենք արատ չենք ունեցել մեր երկար պատմական կեանքում և չունինք այժմ, բայց նոյն իսկ լուսաւոր արեգակն էլ սև բծեր ունի. Հայոց եկեղեցին և եկեղեցականութիւնը հայ ժողովրդի համար ճնշող բռն և վնասակար քարոզել, մի մոլորութիւն է, որ օտար հովերի ազդեցութեան տակ կարող էր ծագել, հայրենի պատմութեան և քաղաքակրթութեան անձանօթ գլուխներում:

Մինչ այս մինչ այն հրատարակուած էին մայիսի 10-ի, յունիսի 7-ի և 30-ի կոնդակները: Տարաբաղդաբար մտքերի շփոթութիւնը պաշտօնական կերպարանք էր ստացել: Ս. Հայրա-



պետի ծերութիւնն ու տկարութիւնը հարթել էր որոշ հուսակցութեան և անձանց ասպարէզը, մանաւանդ Դիւանապետը շատ երիտասարդ, անփորձ և ազդեցութեան ենթարկուած անձն էր: Միջոցներ էին ձեռք առնուած, որպէս զի Ն. Սրբութեան ուշադրութիւնը իրերի իսկական դրութեան վերայ չհրաւիրուի. մենք չենք կարող կանգ առնել այս տխուր պատմութեան մանրամասնութիւնները վերայ. յիշենք միայն, որ այդ միջոցների վերջաբանը 65 ամեայ ծերունի արքեպիսկոպոսի անլուր անպատուութիւնն էր թքակոծութեան եղանակով: Եջմիածնի միաբանների մի մասը բացակայ էր, հազիւ մնացածներից 14 հոգի համարձակուել էին Ն. Սրբութեան մի թուղթ ներկայացնել և հրաւիրել նորա ուշադրութիւնը: Բայց ինքնամոռացութեան հասած զօրեղ հոսանքը իւրն էր անում. ոչ ոք չէր ուղում իրեն հաշիւ տալ, որ մի հարուածով սաքի տակ էր գրւում եկեղեցու դարւոյն պատմութիւնն ու իրաւունքը. եպիսկոպոսը նոյնչափ ձայն ունէր եկեղեցական գործերի մէջ, որչափ մի մատաղահաս օրիորդ, գիւղացի կամ դեղջիւհի: Հայրապետական մի կոնդակով որոշուած էր այնպիսի կարևոր նշանակութիւն ունեցող խնդիրներ, որ ընդհանուր ազգային-եկեղեցական ժողովին էր վերապահուած դարերի ընթացքում: «Ռուսահայց եկեղեցական գործերի կարգադրիչ և տնօրէն» էր հանդիսանում այսպէս կոչուած Կեդրոնական ժողովը: «որ կարող էր քննութեան ենթարկել և որոշումներ տալ Ռուսահայց բոլոր եկեղեցական գործերի վերաբերմամբ», իսկ այդ ժողովը կազմուած էր ոչ թէ եկեղեցականների և ժողովրդի ներկայացուցչութիւնից, ինչպէս մեր եկեղեցու պատմութեան ոգին էր թելադրում, այլ սոսկ ծայրայեղ կուսակցութեան: Կային և մի քանի վարդապետներ ժողովականների մէջ, բայց չնչին բացառութեամբ նման հովերով տարուած կամ որոշ «մանդատներով» եկած:

Ն. Սրբութիւնն սպասում էր թէ Կեդրոնական ժողովը միջոցներ պիտի ցոյց տայ կարգաւորելու մեր դպրոցական և տընտեսական գործերը շափաւորութեան սահմանների մէջ, բայց նորա անդամներն իրենց բոլոր ոյժը լարել էին միայն անուարեկ անելու եկեղեցու հեղինակութիւնն ու ոչնչացնելու նորա սպասաւորութեան նշանակութիւնը: Նոքա շխնայեցին նոյն իսկ ծերունի Հայրապետի պատիւը: Մարդիկ եկել էին յեղափոխելու ամեն ինչ, և այդ ձգտումը այնպիսի մի ուղղութիւն էր ստանում, որ Հայց եկեղեցու կենսունակութիւնը արմատից կտրել էր սպասում: Դպրոց, վարչութիւն, կալուած ամեն ինչ պէտք է խլել եկեղեցու պաշտօնէութեան ձեռքից. չէ՞ որ Ֆրան-



սիտյուն մ էլ պետութիւնը նայնն է անում. նրանց պէտք է թողնել միայն ձեւեր կառարելու իրաւունքը. եկեղեցու կաշուածները պէտք է աւելի և քսածանել կարօտ ֆողովորին՝ հային և թուրքին անխորհրտ սկեղեցու պաշտօնէութեան գործի ընդունակ, ուսում և դիւրութիւն ունեցող տարրը կհետանայ ինքնընտրեան, կմնան նրանք, որոնք ձէս և փամբապաշտութիւնը կառարելուց աւելի ուրիշ բանի ընդունակ չեն: Յանդակին էլ հէնց այս է. կրթութեամբ մտքը ընդգիմադիր ոյժ է: Այս մտքերն էին յեղեղում պատգամաւորների ճառերի մէջ, և այս էր նրանց բերած բարեփոխութիւնը: Սկեղեցին այլ ևս քաղաքակրթական դեր չունէր կառարելու: Համբաւ և անխորհ երեստատարդ պատգամաւորներից շատերն աշխատում էին գերազանցել մէկ մէկուց իրենց երեխայամետ, ծայրայեղ և իրագործման հնարաւորութիւնից դուրի ծրագիրներով և առաջարկներով. ի դուր սմանց աշխատում էին բարեփոխութեան հորցն աւելի իրական հողի վերայ դնել, շեշտելով օրէնքը, եկեղեցու անանգութիւնը և վերջապէս ֆողովի գումարման պայմաններն ու որակը: Փոքրամասնութիւնն ստիպում էր հետանալ. ֆողովորը նկատելով պատգամաւորների մեծամասնութեան բռնած ծայրայեղ և վնասակար ընթացքը, սկսեց բողոքների տարափ թափել Նշմիածին, ֆողովականներն իրենք էլ, գոնէ համեմատաբար խոհեմներն ու փորձառուներն սկսել էին զգալ, որ իրենք շատ հեռու են դնացել, և պակասում է իրենց մէջ առողջ և սեղծագործող ոգին, և հետթափութիւնը զօրանում էր հեազհետէ: Կառավարութեան միջամտութիւնն ու փակումը արտաքին կողմից Կեղբնական ժողովի պատուի վրելութիւնն էր: Կեղբնական ժողովը զրական համարեա օչինչ շատեղծեց, բայց բացտտական մեծ նշանակութիւն ունեցաւ շիտթումած մտքերն աւելի շիտթելու:

Սեր ներքին կեանքի մէջ մի ուրիշ կարեւոր երեւոյթ միաբանական ֆողովի գումարումն էր: Պոլսէնիացի հաստատութիւնից յետոյ Նշմիածնի միաբանութիւնը զրկում է եղել վանական և եկեղեցական գործերի մէջ որ և է մասնակցութիւն ունենալուց: Հասարակ վանքերի վանահայրերն իրենց վանական գործերը կարգադրելու իրաւունք ունին, իսկ Նշմիածնի միաբանութիւնը ոչ մի իրաւունք և ձայն չունի նոյն իսկ բուն վանական, անտեսական խնդիրների մէջ: Այս անբնական վիճակը շատ զգալի էր բուական փամանակից ի վեր, մի քանի անգամ փորձեր էին եղած և կոնգակներ արձակում փանական ֆողովները նորոգելու, բայց արարդիւն: Այս անգամ շատ

ստիպողական հանդամանքներ եղան միաբանական ժողովի նու-  
րոպման առիթը, ուստի և միաբաններից շատերը հաւանաբար  
էին, թէ անտեղի կլինի այն և արդիւնաւոր:

Աւերջին ժամանակներս Եջմիածնի եկամուտներն սկսել են  
նորազել: Կադուսներն վերայ արծից յետոյ ժողովրդի արտաքոյ  
կարգի նստիւթերու թիւները բնականաբար դադարել էին, իսկ  
մարերի շիւթաթեան, որի գործարարն նարատուս էին Եոյն  
խի վերայ կրող և եկեղեցու շնորհն սնարման կերպով վայելչող  
անհամներ, և վերջապէս հայ-թիւրքական ընդհարումից շուտջ  
եկած անտեսական քայքայման և ազքատութեան պատճառով,  
գաղարեցին նաև վիճակային արդեանց պանծու մը: Ամիսներով  
ճեմարանի ուսուցիչներն ու ծառաները սոճիկ շին ստանուս,  
միաբանները հանդերձագին: Մ. Աթուր ակնյայտնի կերպով  
անանկութեան է դիմում, եթէ պայմաններն այսպէս երկար  
շարունակուին: Այս ծանր երեւոյթը ոչ Ա. Լայրապետի, ոչ Սի-  
նոյի և ոչ միաբանութեան ու շողրութիւնից վրիպել կարող  
էր: և ահա Ո 1022 կանգակով սեպտ. 4-ին վեհաառիճան Աա-  
թուրիկոսը հրամայում էր Սինոյի նախանգամ Պէտրոյ արքեպիս-  
կոպոսին միաբանական ժողով գումարել և խորհել Մ. Աթուրի  
անտեսական կացութեան մասին: Միաբանութիւնը իւր կողմից  
մի յանձնաժողով ընարեց, որի կազմած նախապիճն ու եզրակա-  
ցութիւնները սեպտ. 22-ի և 27-ի ժողովներում քննութեան  
ենթարկուեց և ընդունուեց: Այդ փաստաթուղթն արդէն  
սպում է Սարարատի անցեալ թուականի օգոստոս—նո-  
յեմբեր օնարակի մէջ: Միաբանական ժողովի կողմից հաւա-  
նութիւն գրած և Մ. Լայրապետի կողմից հաստատուած էական  
ակզբունքներն էին վանական անտեսական գործերի կառա-  
վարութիւնն անցնում էր միաբանական ժողովին, որ պէտք է  
պարբերական լինէր, վանական հաստատութիւնների պաշտո-  
նեաները, պէտք է բնարուէին միաբանութեան կողմից և առա-  
ջարկուէին Ն. Սարութեան ի հաստատութիւն և վերջապէս  
Պիւանապետից պատ, որին նշանակում է Մ. Աթուրիկոսը,  
պետի ընարուէր երեք հոգուց բաղկացած գիւանական խոր-  
հուրդ: Այս բոլոր ընարութիւնները կատարում էին և հաս-  
տատում: Միաբանութիւնը հաստատուած էր, որ գործերի  
կանոնաւորութեան համար կարող կլինէր այդ միջոցներով օջակ-  
ցութիւն ցոյց տալ և հեաղհեաէ ընտելանալ իմբական գոր-  
ծակցութեան: Բայց անարարազգարար այս օգտակար նարա-  
թիւնը խափանուեցու յայտնի պատմութեան պատճառով, որ,  
հասկանալի է, ոչտակ երկար շունարանել լինը կարող:

Ընդհանուր նշանակութիւն ունեցող հարցերից մէկն է և



քահանաների կրկնամուսնութեան խնդիրը: Ա. Հայրապետի Կ. Պօլսոյ Պատրիարք Տ. Մաղաքիտ արքեպիսկոպոսին ուղղած № 1155 կոնդակից (Սրբաբառ Օգոստոս.—Նոյեմբ.) երևում է, որ այրիացեալ քահանաներից և ժողովրդականներից շատերը գիմել են ն. Սրբութեան քահանաների կրկին ամուսնութիւնը թոյլատրելու համար: Մի խնդիր, որ միայն ընդհանրական Հայրապետի անօրինութեամբ լուծուի ստանալ չէր կարող, ուստի և ն. Սրբութիւնը գիմել է Կիլիկիոյ Ա. կաթողիկոսին և Երուսաղէմի ու Կ Պօլսոյ ամենապատիւ պատրիարքներին, թեմակալ առաջնորդներին, որպէս զի ժողով գումարելով իրենց կարծիքը յայտնեն: Այս հարցը կապուած լինելով եկեղեցական աւանդութիւնների և կանոնների հետ, իսկապէս միայն ընդհանուր եկեղեցականագրային ժողովը կարող էր լուծել, բայց ժամանակի դժուարութիւններն ի նկատի ունենալով, ընդհանրական Հայրապետը այս միջոցն է գտել եկեղեցու լրութեան կարծիքն իմանալու: Ուղիղ ճանապարհ, որ անշուշտ պիտի գործադրուէր նաև մայիսի և յունիսի աւելի կարևոր նշանակութիւն ունեցող կարգադրութիւնների համար, եթէ արգելաւիթ պայմաններ չլինէին և իրերն իրենց բնական ընթացքով գնային: Այժմ արդէն ստացուած են Սոյ կաթողիկոսի, Երուսաղէմի և Կ. Պօլսոյ պատրիարքների պատասխանները. Երուսաղէմի պատրիարքը խորհրդակցել է իւր եպիսկոպոսների և ծայրագոյն վարդապետների հետ, իսկ Կ. Պօլսոյ պատրիարքը կրօնական ժողովի հետ, և բոլորն էլ բացասական պատասխան են տուել: Ռուսաստանի թեմակալ առաջնորդներից դեռ ևս պատասխան չէ ստացուած և խնդիրը մնացել է անլուծելի: Սակայն մի բան, որ վերին աստիճանի անպատշաճ էր, այդ հ. Ներսէս վարդ. Մելիք-Թանգեանի ժամանակից առաջ յայտնած դատողութիւնն էր: Ամեն ոք իրաւունք ունի իւր կարծիքը յայտնել ընդհանուր նշանակութիւն ունեցող մի այսպիսի խնդրի համար, ուրեմն և Ներսէս վարդապետը, սակայն բնագիտական Հայրապետի դիւանապետին անվայել էր, պատշոնական քրքրեր դեռ եւս հրապարակի վերայ չդուռած, իւր Հայրապետի արձակիցների գրութիւնները այնպէս անարգանօք լնկութեան ենթարկելի յառապելն առհասարակ լրջմտութեան նշան չէ, յատկապէս այնպիսի պատասխանատու և ծանր պաշտօն կատարող անձի համար, որպիսին գիւանապետն է: Մենք կդառնանք այս կարևոր խնդրին:

Նախանցեալ տարին 1906 թուի համար արդէն ժառանգութիւն էր թողել հայ թուրքական ընդհարումներն ու երկու գրացի ազգերի թշնամութիւնը: Տարաբաղաբար շարունակուեցաւ բաւական ժամանակ և անցեալ տարուայ մէջ. ոչ



միայն հարելը որ զոհեր ընկան երկու կողմից, այլ և ժողովուրդը յետին ծայր աղքատութեան դուռը հասաւ: Երկու տարի շարունակ կանոնաւոր երկրագործութեան ու աշխատանքի դադարելու պատճառով՝ սպառուած է գիւղացու ամբողջ խնայողութիւնը և սովը անխուսափելի է դարձել ընդհարման գաւառներում, թէ էքրիստոնէական և եղբայրական սիրոյ զգացումը օգնութեան չհասնէ: Ա. Հայրապետի կանգակով հաստատուած նպաստամատոյց յանձնաժողովը Տ. Գարեգին արքեպիսկոպոսի նախագահութեամբ բաւական խոշոր՝ մօտ 200,000 բուրլու օգնութիւն է ուղարկել աղէտի ենթարկուած գաւառներին, հաց կամ դրամական նպաստ, սերմացու, գնելով եղներ, գութան, բայց աղէտի թշուառութեան մեծութեան առաջ շատ չնչին էր այդ օգնութիւնը: Այդ պատճառով ն. Սրբութեան առանձին կանգակով Յուսիկ վարդ. Զոհրաբեան, Յանձնաժողովի երկու անգամների հետ ուղարկուեցաւ Ռուսաստան հանգանակութիւն անելու: Պատգամաւորութիւնն արդէն եղել է Մոսկուայում և Պետերբուրգում և այժմ գանձուում է ն. Նախիջևանում, ուր մասնախմբեր են կազմում նպաստներ ժողովելու: Յուսանք, թէ պատգամաւորութեան աւարելութիւնը արդիւնաւոր կլինի և զոհարերութեան վարժուած հայ ժողովուրդը իւր լուման կուղարկէ սովալլուի հայ եղբայրների կեանքը փրկելու համար:

Մեր եկեղեցական կեանքի էական դժերն ամբողջացնելու համար մի քանի խօսք ևս Տաճկահայոց մասին: Անցեալ տարուայ ընթացքում նորա ևս ազատ չեն եղել վշտերից. չհաշուելով սովարական, ընդհանուր դժուար կացութիւնը, որին ենթարկուած են մեր եղբայրները հարեան պետութեան մէջ, նորա ընդունել են և արտաքոյ կարգի հարուածներ: Տաճկաց կառավարութիւնը ծրագրել էր առնել Վիլիկիոյ կաթուղիկոտական աթոռին պատկանող մի մեծ կալուած՝ Թլանի Ագարակը, որի հասոյթը այդ Աթոռի գլխաւոր ազրիւրն է կազմում: Այս նիւթական կորստի հետ ծրագրուած էր և բարոյական հարուած. յափշտակուած կալուածի վերայ պիտի ընակուէին աւազակաբարոյ Զերքէզներ, որոնց ներկայութիւնը հայ տարրի համար նորանոր աղէտների աղբիւր պիտի լինէր: Ա. Կաթուղիկոտն ստիպուած էր հրաժարուել, հրաժարուեցաւ նաև Կ. Պոլսոյ Պատրիարքութեանը կառավարութիւնը մի անգամ ևս աւելորդ սրանեղութիւն պատճառելուց յետոյ, իւր մտադրութիւնից յետ կացաւ:

Մի երկրորդ խոշոր իրողութիւն Տաճկահայոց ներքին կեանքի մէջ ազգային ժողովի վերակազմութիւնն էր: 1894 թ. յետոյ



ազգային ժողով չէր գումարուած. 1896 թուին միայն Տատեան փաշայի ջանքերով հնարաւոր էր եղել մե մասնաւոր ժողով գումարել և ընտրել ներկայ պատրեարք Տ. Մաղաբիս արքեպիսկոպոսին: Այնուհետև կառավարութիւնը ոչ միայն թոյլ չէր տալիս ժողով գումարել, այլ և պահանջու՛մ էր Աստմանագրութիւնը վերաբնենլ, որ ոչ այլ ինչ էր նշանակում: Բայց եթէ ոչնչացնել այն: Սրբազան Օրմանեանի խոհեմութեանն ենք պարտական ոչ միայն Աստմանագրութեան մինչև այժմ անիտոփոխ պահպանութիւնը, այլ և անցեալ տարի Ազգային ժողովի գումարումն ու վարչութիւնների վերահաղմութիւնը: Տաճկահայոց դրութեան մասին մի թեթև գաղափար հարելի է կազմել այն իրողութեամբ, որ Ազգային ժողովը գումարուել է Պատրիարքարանում պատրեարքի օժանկմբութիւնը շնորհաւորելու անունով, այլապէս անհնար կլինէր կառավարութեան թոյլտուութիւնն ստանալ:


Ընթերցողներին յայտնի է, որ Գէորգ Գ. մեծագործ կաթուղիկոսի ժամանակ Սոոյ և Մ. Աթոռի յարաբերութիւնը լարուած էր: Մահար կաթուղիկոսը վերացրեց պաշտօնական զժառութիւնը, իսկ ներկայ կաթուղիկոսներին մէջ սերայիք, եղբայրական յարաբերութիւն է սկսուած: Կիլիկիոյ արժանընտիր Տ. Սահակ կաթուղիկոսը իւր աթոռը բարձրանալու օրը յեշեց էջմիածնի նախամեծար և ընդհանրական կաթուղիկոսի անունը պատարագի մէջ, և վերջ տուեց տարածայնութեանց: Գահանաների կրկնամուսնութեան տաթիւ գրած թղթի մէջ ևս զիմում է Ս. Էջմիածնի գերագահ Աթոռի Ա. Հայրանկեան պատշաճաւոր յարգանքով: Այս եղբայրական և երկու կաթուղիկոսութիւնների բարեկամական յարաբերութեան շոշափելի յիաստ է և այն իրողութիւնը, որ Սոոյ կաթուղիկոսի հաճութեամբ երկու արմաշական վարդապետներ առաջնորդ են ընտրուած Կիլիկիոյ թեմերի համար, Տ. Մուշեղ Ատանայի և Տ. Կորիւն Մաբուշի համար: Առաջինն արդէն եպիսկոպոս է ձեռնադրուած Կիլիկիոյ Ա. կաթուղիկոսի ձեռքով, երկրորդն էլ երևի նոյն օրհնութեան կարժանանոց: Կիլիկիոյ եպիսկոպոսները պեշտօն կարող են կտատրել միայն Սոոյ թեմերում: Էջմիածնի թեմերն անցնելու ժամանակ հպատակութեան խոստում պիտի տան ընդհանրական Հայրապետին և Էջմիածնի մկաթան ընդունուին:

Տաճկահայոց եկեղեցական կեանքը բարեբաղդաւոր արդար է եղել ներքին ալեկոսութիւններից և աւրախ ենք, որ նոյն իսկ բարեկարգութեան նշաններ է ցոյց տուել, ի հարկէ հնարաւորութեան սահմանների մէջ: Ա. Փրկչի հիւանդանոցը, Տաճկահայոց եկեղեցական-ազգային հաստատութիւնների թաղն ու



պատկը, ստացել է նոր եկեղեցի և մի ամբողջ յարկաբաժին իւր  
 կա՛ն կարասիքով Յակոբեանները առատ նուիրարեցութեան  
 շնորհիւ : Նպաստից յանձնաժողովը օգնութեան է հասել հե-  
 աւասր գաւառներում հիմնուած որբանոցներին և դպրոցներին  
 և կեդրոնական վարչութիւնն աշխատել է դպրոցները յառա-  
 ջադիմութեան վերայ առանձին ուշադրութիւն դարձնել : Ար-  
 մաշու Պարեմլանքը ծաղկում է պատրիարքի քարձր հսկողութեան  
 տակ և անցեալ տարի ևս եկեղեցուն վեց երկասարգ նորընծայ  
 կուսակիցն է տուել : Այդ հաստատութիւնն առ հասարակ սկսել  
 է կարևոր դեր խաղալ մեր հոգևոր կեանքի մէջ, 1890—1906  
 տարիները ընթացքում տուել է 28 կուսակիցն եկեղեցական,  
 որոնցից շատերը առաջնորդական և քարոզչական պաշտօններ  
 են կատարում և մօտ 200 ուսուցիչ : Եկեղեցական երգեցողու-  
 թիւնն ևս սկսել է բարեկարգուել, անցեալ տարուայ վերջերին  
 սկսել են երգել պատրիարքական մայր և միւս եկեղեցիները մէջ  
 հանդուցեալ Եկմալեանի պատարագը :

Գ. Վ. Յօլսէփեան



Մ Ա Յ Ր Ա Թ Ո Ւ

Յունուարի մէկին Մայր տաճարում հայրապետական  
 մաղթանք կատարուեցաւ նոր տարուայ առթիւ : Պատա-  
 րագից յետոյ միաբանութիւնը ներկայացաւ Ս. Հայրա-  
 պետին շնորհատրելու նոր տարին :

Յունուարի 6-ին միաբանութիւնը, ճեմարանի ուսուց-  
 չական խումբը, Սինոդի պրովուրորը իւր ստորագրեալ  
 ծառայողներով, գաւառապետը և միւս աստիճանաւոր-  
 ները ներկայացան Ն. Սրբութեան շնորհատրելու Քրիս-  
 տոսի ծննդեան մեծ տօնը, իսկ 15-ին Ն. Սրբութեան  
 անուանակոչութիւնը :

Մայր Աթոռի տնտեսական անձուկ փիճակի պատճա-  
 ոսով ժամանակաւորապէս փակուած են սեղանատունն ու  
 հացատունը, Արձակուած ծառաները ստացել են նախօժ